

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1

09.10.2017թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2017/10Շ-2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

« 30 » հունվարի 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հովհաննես Մարտիրոսյան» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Մարտիրոսյանի,, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, և հիմք ընդունելով Կողմերի միջև 09.10.2017թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2017/10Շ-2 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը համաձայնվեցին.

- 1.1 Հաստատել Համաձայնագրի 2018թ. օրացույցային գրաֆիկը համաձայն հավելված 1-ի (կցվում է) :
- 1.2 Հաստատել Համաձայնագրի 2018թ. ծավալաթերթ նախահաշիվը համաձայն հավելված 2-ի (կցվում է) :
- 1.3 Հաստատել Համաձայնագրի 2018թ. վճարման ժամանակացույցը համաձայն հավելված 3-ի (կցվում է) :

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության
ք. Երևան, Նալբանդյան 29

ՀՎՀՀ 02565518

Հ/Հ 90001100

Հ/Հ 90001

/ստորագրություն/
Կ.Տ



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ» ՍՊԸ

Արագածոտնի մարզ, գյուղ Միրաք


«ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ,

Ապարանի մ/6

Հ/Հ 220223330972500

ՀՎՀՀ 05203424

/ստորագրություն/
Կ.Տ



ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՑԻԿ

Մ-3, Մարգարա- Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ավտոճանապարհի
Կմ86+700 հատվածում կամրջի վերանորոգում 2018թ.

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Լաբորատոր փորձարկումներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 150 օրացույցային օր
2	Մետ. բազրիքների, մայթի բլոկների սպատեղակայում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 30 օրացույցային օր
3	Կամրջային պատվածքի շերտերի քանդում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 60 օրացույցային օր
4	Թոփքային կառուցվածքի հեծանների սպատեղակայում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 60 օրացույցային օր
5	Նոր պարզունակների իրականացում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 90 օրացույցային օր
6	Ուղղորդ պատերի իրականացում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 150 օրացույցային օր
7	Թոփքային կառուցվածքի հեծանների տեղակայում, կամրջային պատվածքի իրականացում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 150 օրացույցային օր
8	Մոտեցումներում ճան-պատվածքի վերականգնում, շեյերի հարթեցում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 150 օրացույցային օր

9	Մետ. Բազրիքների, արգելափակոցների և ավտոտրիչների տեղադրում և ներկում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 90 օրացույցային օր
	Ընդհանուր աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 150 օր հետո

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարության
ք. Երևան, Նալբանդյան 28,

ՀՎՀՀ 02565518

Հ/Հ 900011004794

Հ/Հ 900011012500

/ստորագրություն/



ԿԱՊԱՆԱՌՈՒ


«ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ» ՍՊԸ
Արագածոտնի մարզ, գյուղ Միրաջ
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ

Ապարանի մ/6

Հ/Հ 220223330972500

ՀՎՀՀ 05203424

/ստորագրություն/



Ծավալաթերթ - նախահաշիվ

**Մ-3, Մարզադահլիճի Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության
ա/ճանապարհի ԿՄ86+700 հատվածում կամրոջ վերանորոգում
2018**

«	Աշխատանքների անվանումը	Չափի միավ.	Քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
1	Մետաղական բազրիքների ապատեղակայում, բարձում, տեղափոխում պահուստ 3,0կմ (12գծ.մ)	տոն	0.2	36635	7327
2	T1-1,0 հավաքովի մայթի բլոկների ապատեղակայում 8հատ , բարձում տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ ³	14	23030	322425
3	Երթևեկելի մասի ա/բ ծածկի քանդում h=10սմ, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ ²	150	1102	165358
4	Պաշտպանիչ, ջրամեկուսիչ և հարթեցնող շերտերի քանդում, բարձում տեղափոխում լցակույտ 3,0կմ h=8սմ	մ ²	106	765	81038
5	ՊՔ-9 կողավոր սալերի ապատեղակայում, բարձում, տեղափոխում լցակույտ 3,0կմ V=2,0մ ³ , G=5,0տոն	հատ	2	81180	162360
6	L=8,86մ հավաքովի ե/բ տավրածև դիաֆրագմաներով հեծանների ապատեղակայում, բարձում, տեղափոխում լցակույտ 3,0կմ V=3,5մ ³ , G=8,75տոն	հատ	7	87776	614431
7	Թռիչքային կառուցվածքից դուրս ամեն կողմից 3-ական գծ.մ հողային պաստառի (IV կարգ) քանդում էքսկավատորով (0,65մ ³), տեղում կուտակումով	մ ³	95	693	65847
8	Պարզունակների վրայի խամբարե բետոնի քանդում հարվածահատ մուրճով, բարձում, տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ ³	2.0	31717	63434
9	Գոյություն ունեցող պարզունակների մեջ d=40սմ և L=20սմ խորությամբ անցքերի փորում խարիսիների տեղադրման համար	տեղ	128	1437	183959
10	Անցքերի մեջ ցեմենտե շաղախի լցում	մ ³	0.032	140906	4509
11	Անցքերի մեջ խարսխածողերի տեղադրում (51,2 գծ.մ) Ø16սմ AIII L=40սմ	կգ	80.8	811	65496
12	Գոյություն ունեցող պարզունակի վրա նոր պարզունակի իրականացում ե/բետոնով (h=0,38-0,5մ) B25 F200	մ ³	7.7	129251	995235
13	Ամրան Ø8AII	կգ	158.26	544	86151
14	Ամրան Ø12AIII	կգ	266	534	142055
15	ցից Ø22AIII 24հատ	կգ	39.4	534	21041
16	պարույր Ø4AII 24հատ	կգ	5.9	544	3212
17	ռետինե խողովակ մետր. =24սմ L=45սմ; 24 հատ	կգ	9.84	743.0	7311
18	Հակասեյսմիկ հենակների արտաթողեր (шпилька) ամրանØ12AIII	կգ	19.72	534	10531
19	Հակասեյսմիկ հենակի ե/բետոն B25 F200 (ամրանների ծավալներտ տրված են պարզունակի հետ)	մ ³	0.25	107112	26778
20	Եռաչերտ տղ հեծանների հենման մասում	մ ²	8.4	13613	114347

15	Հավաքովի ե/բ ՈՒ-9 կողավոր սալերի տեղակայում պնևմոնավային կռունկով $V=2,0մ^3$, $G=5,0$ տոն Ներդիր էլեմենտներ երկու եզրային հեծաններում Ն. է.-1-18 հատ՝ Թերթավոր պողպատ 18 հատ $150 \times 200 \times 10$; $G=2,35կգ$ -42,4կգ, ամրան AIIIÆ12մմ-18,22կգ, ն. է.-2-18 հատ, թերթավոր պողպատ 18 հատ $150 \times 100 \times 10$; $G=1,18կգ$ -21,2կգ, ամրան AIIIÆ12մմ-12,78կգ	հատ	12	423116	5077391
16	Հավաքովի ե/բ ՈՒ-9 կողավոր սալերի արժեքը	հատ	5	642571	3212855
17	Սալերի ցցերի մեջ անցքերի լցում B30 դասի բետոնով	մ ³	0.09	167811	15103
18	Երիթային կցանման իրականացում հեծանների միջև B 35	մ ³	3.55	148526	527267
19	պարույր A1Ø3մմ	կգ	66.9	544	36418
20	Թռիչքային կառուցվածքի բետոնե հավասարեցնող շերտ $h=3$ սմ B20	մ ²	108	1934	208822
21	Զրամեկուսացում „техноласт Б” ուլ $h=1$ սմ,	մ ²	108	14159	1529124
22	Ցինկապատ թիթեղից ջրթափ հովար $d=0,8$ մմ	գծ.մ	18	4897	88154
23	Ամրանավորված բետոնե պաշտպանիչ շերտ B25 երթևեկելի մասում $h=4$ սմ	մ ²	84	2781	233643
24	Ցանց ամրանային 100×100 մմ; Ø6 A1	մ ²	84	1949	163741
25	Բետոնե պաշտպանիչ շերտ առանց ամրանավորման B25 մայթերի հատվածում $h=4$ սմ	մ ²	13.5	2781	37550
26	Հավաքովի ե/բետոնե անվահրիչի տեղադրում (299x90x60սմ) B25 F200 $V=0,63մ^3$ $P=1,57$ տոն (ավազացեմենտե շաղախ անվահրիչների տակ $h=1$ սմ; $11մ^2$)	հատ	6	294473	1766840
27	Մանրահատիկ ա/բ $h=4$ սմ	մ ²	84	5773	484923
28	Մանրահատիկ ա/բ $h=3$ սմ	մ ²	84	4403	369840
29	Մայթերի ավազահատիկ ա/բ $h=4$ սմ	մ ²	13.5	5297	71514
30	Մետաղական բազրիքների տեղակայում թռիչքային կառուցվածքի վրա $L=3,0$ մ սեկցիաներով ճիստ-18գծ.մ	կգ	538.74	759	408665
31	Հենարանների պարզունակների և հեծանների գրունտով ծածկվող մակերևույթների երկշերտ ջրամեկուսացում տաք բիտումով	մ ²	35	3677	128705
32	Հեծանների գոյություն ունեցող պարզունակի միաձուլված մասերի քայքայված բետոնի վերականգնում B25 դասի բետոնով	մ ³	0.1	142090	14209
33	Հետադարձ լիցք բուլդոզերով թռիչքային կառուցվածքից դուրս	մ ³	69	98	6782
34	Ավազե հարթեցնող շերտ նույն տեղում $h=10$ սմ	մ ²	60	466	27948
35	Չափազատված խիճ $h=16$ սմ բիտումի տարածումով, $4,12տ/1000մ^2$	մ ²	60	3535	212101
36	Տաք, ծակոտկեն խոշորահատիկ ա/բետոն $h=6$ սմ	մ ²	60	6992	419525
37	Տաք մանրահատիկ ա/բետոն „Ա” տիպ $h=4$ սմ	մ ²	110	5773	635019
38	Հավաքովի ե/բետոնե անվահրիչի անցումային բլոկի տեղադրում (150x75x50սմ) B25 F200 $V=0,4մ^3$ $P=1,07$ տոն (ավազացեմենտե շաղախ $h=1$ սմ; $3,0մ^2$)	հատ	4	186254	745014
39	Անվահրիչների և անվահրիչների անցումային բլոկների ներկում	մ ²	39	1091	42557
40	Փոսորակի փորում ուղղորդող կողային պատերի հիմնատակում IIIԵՎ գրունտներում էքսկավատորով ($0,65մ^3$), կուտակումով	մ ³	170	503	85445
41	Նույնը ձեռքով	մ ³	16	3471	55535
42	Ավազակոպձե շերտ կողային պատերի հիմնատակում $h=20$ սմ	մ ³	4.5	6708	30184
43	Կողային ուղղորդ պատերի հիմքի միաձույլ բետոն B20	մ ³	27.92	73666	2056768
44	Կողային ուղղորդ պատերի իրանի միաձույլ բետոն B20	մ ³	43.92	76541	3361675
45	Կողային պատերի գրունտով ծածկվող մակերևույթի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ ²	106.5	3677	391631
46	Հետադարձ լիցք բուլդոզերով	մ ³	110	98	10812

47	Նոր մետաղական արգելափակոցների տեղադրում աջից(4+5մ)	զծ.մ	9	22989	206904
48	Գոյություն ունեցող արգելափակոցների վերատեղադրում, ներկում ձախից (4+4մ)	զծ.մ	8	5795	46356
49	Մետաղական արգելափակոցների ներկում	տոն	0.14	18636	2606
50	էլեկտրական մալուխների ապատեղակայում, նորից տեղադրում	զծ.մ	40	448	17915
51	d=50մմ d=4,6մմ պոլիէթիլենային խողովակների տեղադրում	զծ.մ	40	1645	65809
52	Կամրջի չորս անկյուններում լիցքի իրականացում ձեռքով տեղում կուտակված գրունտով, խտացումով	մ ²	82	417	34154
				Ընդամենը	25972349
Ընդհանուրը					25972349

* Միավորի արժեքը ներառում է շահույթը և Ա.Ա.Հ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ք.Երևան, Նալբանդյանի 78»

ՀՎՀՀ 02506518
Հ/Կ 90001804704
Հ/Կ 90001807287




/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ» ՍՊԸ
Արագածոտնի մարզ, գյուղ Միրաք
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ,
Ապարանի մ/ճ

Հ/Կ 220223330972500
ՀՎՀՀ 05203424



/ստորագրություն/
Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45221117/1	Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի ԿՄ86+700 հատվածում կամրջի վերանորոգման աշխատանքներ	2,616,300	2,616,300	2,616,300	25,469,150	25,469,150	25,469,150	25,469,150	25,469,150	25,469,150	25,469,150	25,469,150	25,469,150	25,469,150

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության

ք.Երևան, Նալբանդյան 28

ՀՎՀՀ 02565518

Հ/Հ 9000110047

Հ/Հ 9000110126

/ստորագրություն/



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ» ՍՊԸ

Արագածոտնի մարզ, գյուղ Միրաք

«ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ,


Ապարանի մ/ճ

Հ/Հ 220223330972500

ՀՎՀՀ 05203424

/ստորագրություն/

Կ.Տ



**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿՆ-ԳՀԱԵՁԲ-2017/10Ե-2**

ք. Երևան

<<09>> <<հոկտեմբերի>> 2017թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<<Ովիաննես Մարտիրոսյան>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Մարտիրոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2017թ. նոյեմբերի 15-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծնախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր : Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N2.1 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝ ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն, բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 44520000 (քառասունչորս միլիոն հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, որից 7420000 (յոթ միլիոն չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

2-րդ չափաբաժին՝ 29880000 (քսանինը միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ որից 4980000 (չորս միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: 2017թ. իրականացվելիք աշխատանքների գինը կազմում է 4410850 (չորս միլիոն չորս հարյուր տաս հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

3-րդ չափաբաժին՝ 14640000 (տասնչորս միլիոն վեց հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ՝ որից 2440000 (երկու միլիոն չորս հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: 2017թ. իրականացվելիք աշխատանքների գինը կազմում է 14640000 (տասնչորս միլիոն վեց հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ԱԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ԱԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱԿԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

